ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Սույն թվականի սեպտեմբերի 1—11 օրերին Պրագայում գումարվեց Եվրոպայի Եկեղեցիների Համաժողովի 10-րդ հավաքը: Սույն հավաքը գումարվեց «Աստված համախմբում է — Քրիստոսով՝ Նոր Արարչագործություն» խորագրով: Ժողովին մասնակցեցին Եվրոպայի բոլոր երկրները ներկայացնող 114 եկեղեցիների 317 ներկայացուցիչներ:

Սառը պատերազմի ավարտով թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Եվրոպաները կանգնեցին նոր իրականությունների առջև: Արևելյան Եվրոպայում ստեղծվեցին նոր ժողովրդավարական կառավարչություններ, որոնք իրենց առջև խնդիր են դրել իրականացնելու շուկայական տնտեսության անցման բարդ գործընթացը: Մյուս կողմից՝ Արևմտյան Եվրոպան բարոյական նոր պարտավորությունների տակ է ընկնում: Այս պայմաններում, հետևաբար, կարևոր է, որ Եվրոպայի եկեղեցիները միասնաբար իրենց խոսքը ասեն և Ս. Հոգու առաջնորդությամբ փորձեն ընդհանուր հայտարարի գալ հասարակական լայն խավերին հուզող բազմաթիվ երևույթների վերաբերյալ:

Համաժողովում հատուկ քննության ենթարկվեցին նոր դարձան, զոր օրինակ, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի, նախկին Հարավսլավիայի, Կիպրոսի, Իռլանդիայի և Ուկրաինայի հետ կապված մտահոգիչ վիճակները՝ կապված պատերազմի, ահաբեկչության, ցեղական թշնամության և այլ երևույթների հետ: Ժողովը հայտարարեց, որ Եկեղեցին, որպես Քրիստոսի մարմին, պարտավոր է ժողովուրդներին ցույց տալ, որ տարբեր մշակույթ և ինքնություն ունեցող ժողովուրդները կարող են խաղաղությամբ ապրել միասին: Քննության ենթարկվեց նաև փախստականների հարցը, քննադատվեցին ազգայնամոլության և ազգային խտրականության հետ կապված շատ երևույթներ:

Համաժողովում քննարկվեցին եկեղեցական միության և Եկեղեցու առաքելության հետ առնչվող հարցեր: Որոշվեց շարունակել գործակցությունը արտ ոգին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հետ, խրախուսել տարբեր Եկեղեցիների միջև տեղի ունեցող երկխոսություններն ու հոգևոր կապը, բացահայտել, որ բոլոր Եկեղեցիներն էլ դեմ են ահաբեկչությանը, ամեն կերպ զորավիգ կանգնել Կարմիր Խաչին և մարդասիրական օգնությունների այլ ծրագրերին, դեմ կանգնել ազգայնամոլական երևույթներին, որոնք ժխտում են ուրիշ ժողովուրդների մարդկային իրավունքը:

Ժողովը կոչ արեց նաև պաշտպանել երեխաների իրավունքը, մերժել տարների նկատմամբ տածած ատելությունը, միշտ պաշտպան կանգնել

փախստականներին: Դրվեց նաև կանանց և տղամարդկանց հավասարության հարցը:

Սույն Համաժողովին, հանուն Հայ Առաքելական Ս. Եկեղեցու, մասնակցեց Հունաստանի Հայոց Հայրապետական Պատվիրակ Տ. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյանը: Այդ առթիվ սրբազան հայրը հանդես եկավ մի համապարփակ զեկուցումով՝ նվիրված հայ-ադրբեջանական բախումներին—Ղարաբաղի հարցին: Զեկուցման մեջ հատկապես նշվեց, որ Ղարաբաղը Հայոց պատմական Արցախն է, ուր կան ավելի քան 1600 հայկական հուշարձաններ, որոնցից 200-ը՝ 4—6-րդ դարերի: Զեկուցման մեջ հատկապես այն միտքը արտահայտվեց, որ Միջազգային համայնքը սահմանների անփոփոխության հարցը դնելուց առաջ պարտավոր է վերացնել բոլոր տեսակի անարդարություններն ու քննել դրանց առաջացման պատճառները: «Հայաստանը և Ադրբեջանը Միջազգային համայնքի օգնության կարիքն ունեն խաղաղությամբ լուծելու համար իրենց միջև գոյություն ունեցող հակադրությունը», եզրակացրեց սրբազան հայրը:

Սույն համաժողովում Տ. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյանը ընտրվեց Համաժողովի կենտրոնական հանձնախմբի անդամ: